ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/24

ք. Երևան «14» 06 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ պրն Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և <<Արևիկ հրատարակչություն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու որպես կանխավճար ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Կատարողին վճարել որպես կանխավճար վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 45617910 (քառասունհինգ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր տաս) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝

հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել կանխավճար պայմանագրի գնի 100% չափով համաձայն N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

3.3 Պատվիրատուն կանխավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման ավարտից հետո՝ հանձման–ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հետ են գանձվում Կատարողին որպես կանխավճար փոխանցված գումարից:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Արևիկ հրատարակչություն>> ՓԲԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Տերյան 91
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 22055331129000
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 01501418
Գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Ս. Մուրադյան	_____ Ս. Հովհաննիսյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«14» 06 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	22111110-6	Դասագիրք-տետր «Մաթեմատիկա 1», 1-ին մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Մաթեմատիկա 1»՝ 1-ին մաս, 1-ին դասարանի դասագիրք-տետր, հեղ. Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան Բովանդակային չափանիշներ Առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված է գիրք-տետր: Անհրաժեշտ է, որ դասագիրք-տետրում առաջադրանքներն ու հասկացությունները հստակ ձևակերպված լինեն: Դասագիրքը պետք է բաղկացած լինի նախաթվային բաժնից, որում կուսումնասիրվեն այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը, նյութը և 1-ից 10 թվերին վերաբերող բաժնից: Դասագիրքը պետք տրոհված լինի թեմաների, անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Դասագիրք-տետրն ուսանելուց հետո սովորողների մեջ պետք է ձևավորվեն այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները, որոնք պետք է հիմք դառնան հետագա ուսուցման համար: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները պետք է ներկայացվեն պարզից բարդ սկզբունքով: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքային առանձնահատկություններին, անհրաժեշտ են միջառարկայական կապերը: Պատկերազարդումները պետք է համադրված լինեն տեքստին՝ ներառելով սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Տեխնիկական չափանիշները Ստանդար՝ 60 x 84 x 1/8, 80 էջ, 4 + 4 գույն Տեխնիկական ցուցանիշները՝ թուղթ օֆսեթ, 80 գ Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով	հատ	1269	1250	1586250	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

2	22111110-8	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Մաթեմատիկա 1»՝ 2-րդ մաս, 1-ին դասարանի դասագիրք, հեղինակներ՝Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան Ռ.Հովսեփյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար: Դասագրքում պետք է ուսումնասիրվեն երկրորդ տասնյակի թվերը՝ 10-ից մինչև 20, սովորողներին պետք է տրվի պատկերացում երկնիշ թվերի, դրանց կազմության, կլոր թվերի, ինչպես նաև երկարության, ժամանակի, զանգվածի, տարողության և մի քանի կարևոր չափման միավորների՝ դեցիմետրի (սանտիմետրին աշակերտներն արդեն ծանոթացել են առաջին կիսամյակում), ժամի, կիլոգրամի, լիտրի մասին: Բացի այդ՝ երեխաները պետք է յուրացնեն թվաբանական կարևորագույն գործողությունները՝ գումարումը և հանումը (20-ի սահմաններում), խնդիրը, խնդրի պայմանը, խնդրի հարցը (հարցադրում), սովորեն լուծել, ինչպես նաև՝ կազմել պարզ խնդիրներ:Դասագրքում նույնպես պետք է լինեն գունեղ, տպավորիչ պատկերազարդումներ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է նպատակային լինեն, համադրված տեքստին: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի ստեղծագործական միտքը զարգացնող առաջադրանքներին:Անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Շարադրանքը պետք է լինի մատչելի: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 96 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինացված Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով	հատ	824	1020	840480	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը
3	22111110-17	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Մաթեմատիկա 2»՝ 1-ին մաս, 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Վ. Հովհաննիսյան, Ս. Հարությունյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի բովանդակությունը, որն իր մեջ ներառում է 2 հիմնական թեմաներ /«Երկնիշ թվեր» և «Եռանիշ թվեր»/ պետք է, համապատասխան լինի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:Պետք է համապատասխան լինի սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, պետք է նպաստի առաջին դասարանում ձեռքբերած գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների	հատ	621	940	583740	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				արժեհամակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություն-ներին: Դասագրքի շարադրանքը պետք է լինի յուրացման համար մատչելի: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստի-ճանին, ընկալման հնարավորություններին: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 96 էջ, 4 + 4 գույն Տեխն.ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինացվ. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
4	22111110-19	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Մաթեմատիկա 2»՝ 2-րդ մաս, 2-րդ դասարանի դասագիրք, հեղինակներ՝ Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան, Ս.Սարգսյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է պարունակի մեկ խոշոր բաժին՝ «Բազմապատկում և բաժանում», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռոեն կազմակերպել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիք. առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Շարադրանքը պետք է լինի մատչելի, անհրաժեշտ է միջառարկայական կապերի ապահովվածությունը: Դասագրքում ներառված նյութերը պետք է սո-վորողներին տան հնարավորություն հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատ-մամբ:Անհրաժեշտ է, որ բովանդակությունը տրոհված լինի թեմաների, և առկա լինի բովանդակությանցանկը:Պատկերազարդումները՝ նկար-ները, գծանկարները, նպատակային են, պետք է համադրված լինեն	հատ	621	940	583740	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				տեքստին և մեկնաբանված: Առաջադրանքներն ու պատկերազարդումները պետք է ներառեն սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է ավարտվի «ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝70 x 100 x 1/16, 116 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
5	22111110-40	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Մաթեմատիկա 4»՝ 1-ին մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան,Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան, Ս.Սարգսյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է սկսվի նախորդ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությունից» և պետք է պարունակի մեկ խոշոր բաժին՝ «Գործողություններ բնական թվերի հետ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտություններ-ի, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Անհրաժեշտ է, որ նյութի ծավալը համապատասխան լինի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները պետք է ներկայացվեն պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև՝ միջառարկայական կապերով: Անհրաժեշտ է բովանդակության տրոհումը թեմաների և ցանկի առկայությունը: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է լինեն նպատակային՝ տեքստին համադրված: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝70 x 100 x 1/16, 128 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով	հատ	791	870	688170	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը
6	22111110-42	Դասագիրք «Մաթեմատիկ	«Արևիկ» հրատարակչ	«Մաթեմատիկա 4»՝ 2-րդ մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան,Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան,	հատ	791	870	688170	Մինչև ս/թ օգոստոսի

		ա 4», 2-րդ մաս	ություն ՓԲԸ, ՀՀ	Ս.Սարգսյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Կոտորակներ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Դասագիրքն ավարտվում է «Լրացուցիչ առաջադրանքներով» և ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորությունների: Անհրաժեշտ է ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքների, տրամաբանական խնդիրների առկայությունը, ամփոփիչ հարցեր: Անհրաժեշտ է բովանդակության տրոհումը թեմաների և ցանկի առկայությունը:Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները պետք է լինեն նպատակային՝ տեքստին համադրված: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝70 x 100 x 1/16, 104 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					20-ը
7	22111110-43	Դասագիրք «Անգլերեն 4», 1-ին մաս	«Արևիկ» հրատարակչ ություն ՓԲԸ, ՀՀ	«Անգլերեն 4»՝ 1-ին մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է բաղկացած լինի ներածական բաժնից, որտեղ զետեղված են 3-րդ դասարանի նյութը կրկնող վարժություններ, և 6 հիմնական բաժնից (Unit 1-6), որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով ա-ռարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի առարկայի ուսուցմանը հատկացված ժամաքանակին: Յուրաքանչյուր	հատ	26056	780	20323680	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				բաժին պետք է ներառի քերականական նյութ, որը ներմուծվում է մոդելների, բանաձևերի ու աղյուսակների ձևով և ընգրկում անհրաժեշտ այն ծավալը, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին և բանավոր խոսքը, բառապաշարը զարգացնող առաջադրանքներ: Դասագիրքն ավարտվում է բառարանով՝ Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքին, յուրացմանը: Դասագրքի շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև միջառարկայական կապերով: Անհրաժեշտ են նաև ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը պետք է տրոհված լինի թեմաների, բովանդակության ցանկի առկայությունը պարտադիր է: Պատկերազարդումները պետք է լինեն նպատակային և տեքստին համապատասխան: <u>Տեխնիկական չափանիշները</u> Ստանդարտ՝70 x 100 x 1/16, 108 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
8	22111110-45	Դասագիրք «Անգլերեն 4», 2-րդ մաս	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, ՀՀ	«Անգլերեն 4»՝ 2-րդ մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագրքում պետք է զետեղված լինեն 4-րդ դասարանում ուսումնասիրվող մնացած 6 բաժինները, որոնք ըստ առարկայական ծրագրի՝ ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի առարկայի ուսուցմանը հատկացված ժամաքանակին: Յուրաքանչյուր բաժին պետք է ներառի քերականական նյութ, որը ներմուծվում է մոդելների, բանաձևերի ու աղյուսակների ձևով և ընգրկում անհրաժեշտ այն ծավալը, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին և բանավոր խոսքը, բառապաշարը զարգացնող առաջադրանքներ: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքին, յուրացմանը: Դասագրքի շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև միջառարկայական կապերով: Անհրաժեշտ են նաև ուսումնական	հատ	26056	780	20323680	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը պետք է տրոհված լինի դասերի, է բովանդակության ցանկի առկայությունը պարտադիր է: Պատկերազարդումները պետք է լինեն նպատակային և տեքստին համապատասխան: Դասագիրք պետք է ավարտվի ուսումնասիրված նյութի կրկնությամբ: Տեխնիկական չափանիշները Ստանդարտ՝70 x 100 x 1/16, 120 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					

1-8- րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը,

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից **բաշխման ցուցակի**:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Հովհաննիսյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաշիվ-տարիներ	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ*	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք-տետր «Մաթեմատիկա 1»,1-ին մաս	45	26	100	750	112	0	0	0	219	10	2	5	1269
2	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս	55	0	100	400	49	0	0	0	156	0	64	0	824
3	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս	40	23	35	280	50	0	7	0	174	5	2	5	621
4	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս	40	23	35	280	50	0	7	0	174	5	2	5	621
5	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս	130	56	76	350	39	0	0	0	127	5	3	5	791
6	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս	130	56	76	350	39	0	0	0	127	5	3	5	791
7	Դասագիրք «Անգլերեն 4», 1-ին մաս	8782	918	2014	2000	1508	2504	1331	2837	2119	310	1128	605	26056
8	Դասագիրք «Անգլերեն 4», 2-րդ մաս	8782	918	2014	2000	1508	2504	1331	2837	2119	310	1128	605	26056
ԸՆԴԱՄԵՆԸ		18004	2020	4450	6410	3355	5008	2676	5674	5215	650	2332	1235	57029

* ՀՀ ԿԳՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ա. Հովհաննիսյան

Հավելված N 2
«14» 06 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին, 100% կանխավճարի ձևով, ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 20-ը/	Ընդամենը
1	22111110-6	Դասագիրք-տետր «Մաթեմատիկա 1», 1-ին մաս	-	-	-	-	-	920000	1586250	1586250	1586250	1586250	1586250	1586250	1586250
2	22111110-8	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս	-	-	-	-	-	488000	840480	840480	840480	840480	840480	840480	840480
3	22111110-17	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս	-	-	-	-	-	339000	583740	583740	583740	583740	583740	583740	583740

4	22111110-19	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 2-րդ մաս	-	-	-	-	-	339000	583740	583740	583740	583740	583740	583740	583740
5	22111110-40	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս	-	-	-	-	-	399000	688170	688170	688170	688170	688170	688170	688170
6	22111110-42	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս	-	-	-	-	-	399000	688170	688170	688170	688170	688170	688170	688170
7	22111110-43	Դասագիրք «Անգլերեն 4», 1-ին մաս	-	-	-	-	-	11788000	20323680	20323680	20323680	20323680	20323680	20323680	20323680
8	22111110-45	Դասագիրք «Անգլերեն 4», 2-րդ մաս	-	-	-	-	-	11788000	20323680	20323680	20323680	20323680	20323680	20323680	20323680
ԸՆԴԱՄԵՆԸ								**26 460 000**	**45 617 910**	**45 617 910**	**45 617 910**	**45 617 910**	**45 617 910**	**45 617 910**	**45 617 910**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Հովհաննիսյան